

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/6

10 հունիսի 2014 թ.

Քննարկվեց «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ 08.05.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 12.03.2014 թ-ի թիվ 2129252 ստուգման ակտի դեմ:

«Ախորժակ Քլաբ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

12.03.2014 թ-ին «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ին ուղարկվել է թիվ 2129252 ստուգման ակտը, համաձայն որի «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ում թվով 40 վարձու աշխատողներ ձևակերպված չեն եղել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Վերոնշյալի հիման վրա հաշվարկվել է 24000000 ՀՀ դրամ եկամտային հարկ:

«Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) գտնում է, որ ստուգման անցկացման և խախտումների հայտնաբերման ու արձանագրման ընթացքում ստուգում իրականացնող հարկային մարմնի կողմից անտեսվել և խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջներն ու ընկերության իրավունքներն ու օրինական շահերը: Վերոնշյալի հետևանքով ստուգում իրականացնող հարկային մարմինն արձանագրել է թվով 40 վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված լինելու փաստը, ինչը չի համապատասխանում իրականությանը: Ավելին, ստուգումն իրականացրած հարկային մարմնի կողմից կազմված արձանագրության մեջ նշվել է 39 վարձու աշխատողի անուն, իսկ ստուգման ակտի նախագծում և ստուգման ակտում այդ թիվն ավելացել է և դարձել է 40:

Հարկ ենք համարում նշել որ, ստուգում իրականացրած հարկային մարմնի կողմից կազմված արձանագրությունը ոչ ձևական և ոչ էլ բովանդակային առումով չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին, հետևաբար չի կարող տնտեսվարող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանված են ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում): Նշված կարգի իմաստով աշխատողի աշխատանքի ընդունումը համարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված, եթե առկա չէ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր:

Տվյալ պարագայում, սակայն, գրավոր աշխատանքային պայմանագրերն առկա են: Դրանց մի մասը գտնվում է «Նետ Պրոֆիտ» ՍՊԸ որպես «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ին հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերության մոտ, իսկ մյուս մասը ստուգումն անցկացնելու պահին գտնվել է «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ տնօրենի մոտ, ինչի մասին ստուգում իրականացնող հարկային մարմինը տեղյակ է եղել:

Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք պարտավոր են գործատուից պահանջել փաստացի աշխատանք կատարող անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը, իսկ անհրաժեշտության և առկայության դեպքում՝ նաև գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը: Մինչդեռ, «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ում ստուգում իրականացրած հարկային մարմնի աշխատակիցներն անտեսել են այն փաստը, որ ընկերության փաստաթղթերի ողջ փաթեթը, այդ թվում աշխատանքային պայմանագրերը, գտնվում են «Նետ Պրոֆիտ» ՍՊԸ մոտ և հնարավորություն չեն ընձեռել «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ին ներկայացնել այդ աշխատանքային պայմանագրերը:

Որոշման համաձայն՝ ստուգում իրականացնող անձինք պարտավոր են կազմել ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր

պայմանագիր: Փաստաթղթերի ուսումնասիրությամբ, գործատուից գրավոր բացատրություններ վերցնելով՝ ստուգում իրականացնող անձինք պարտավոր են պարզել կազմված ցանկում ներառված անձանց կողմից իրականացվող կամ ստուգվող ժամանակաշրջանում իրականացված աշխատանքային պարտականությունների բնույթը: Ստուգում իրականացնող հարկային մարմինը ոչ միայն չի փորձել գործատուից համապատասխան բացատրություններ ստանալ, այլև անտեսել է այն բոլոր փաստականները, որոնք վկայակոչել է գործատուն՝ «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ն:

Որոշման 5-րդ կետի համաձայն՝ արձանագրության մեջ պարտադիր նշվում են հարկային մարմնի կողմից կազմված ցանկում ընդգրկված անձանց անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրանց կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը: Այնինչ, կազմված արձանագրության մեջ ոչ միայն նշված չեն ցուցակում ընդգրկված անձանց անձնագրային տվյալները, նրանց կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը, այլև շատ դեպքերում նշված է միայն անձի անունը: Ակնհայտ է, որ միայն տվյալ անձանց անուններն ու ազգանունները նշելը բավարար չէ այդ անձանց անհատականացնելու համար, քանի որ ՀՀ-ում միևնույն անուն ազգանունը կրող հազարավոր անձինք կան: Այդ իսկ պատճառով Որոշմամբ սահմանվել է հարկային մարմնի կողմից կազմված ցանկում ընդգրկված անձանց անձնագրային տվյալների պարտադիր նշելու պահանջ: Ուստի, դրանց բացակայությունը հարկային մարմնի կողմից կազմված արձանագրությունը դարձնում է ոչ արժանահավատ և իրավական ուժից զուրկ:

Բացի դրանից, որոշ անձանց անուններ (Հայկուշ Սենիկյան, Նորիկ Զոհրաբյան, Ռաֆիկ Ղամբարյան, Լուսինե Ատեփանյան, Արամայիս Սարգսյան) արձանագրությունում առհասարակ նշված չեն ոչ Կոմիտաս 50/50 հասցեում և ոչ էլ Մանթաշյան հասցեում աշխատանք կատարող վարձու աշխատողների ցանկում, սակայն վերջնական ցանկում նշվել են որպես աշխատողներ, որոնց աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չի եղել: Անբացատրելի է, թե ովքեր են տվյալ անձինք առհասարակ և ինչպես են հայտնվել հարկային մարմնի աշխատակիցների կողմից կազմված ցանկում:

Որոշմամբ ՀՀ Կառավարությունը սահմանել է նաև արձանագրության ձևը, սակայն ստուգում իրականացրած մարմնի կողմից կազմված արձանագրությունը բոլորովին չի համապատասխանում արձանագրության համար սահմանված ձևին: Արձանագրությունը շարադրված է ազատ ոճով և ոչ ձևական, ոչ բովանդակային առումով չի համապատասխանում Որոշմամբ սահմանված պահանջներին: Հետևաբար, ստուգում իրականացրած մարմնի կողմից կոպտորեն խախտվել են ՀՀ Կառավարության թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված պարտադիր պահանջները:

«Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ին պատկանող Մանթաշյան 28/4 հասցեում գտնվող հանրային սննդի կետն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2014 թ-ի փետրվարի 18-ից, իսկ հարկային մարմնի կողմից ստուգումն անցկացվել է դրանից ընդամենը 2 օր անց՝ փետրվարի 20-ին: Բացակայում է տրամաբանությունը ստուգում անցկացնել հանրային սննդի կետում, որն իր գործունեությունը սկսել է ստուգումից երկու օր առաջ: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել նոր աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) համար գրանցման հայտ և եկամտային հարկի ամփոփ հաշվարկ: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մանթաշյան 28/4 հասցեում գտնվող հանրային սննդի կետն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2014 թվականի փետրվարի 18-ից, իսկ սննդի տվյալ կետում աշխատող վարձու աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվել են փետրվարի 11-ին, «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ն իրավունք ուներ նոր աշխատողների համար գրանցման հայտերը և եկամտային հարկի ամփոփ հաշվարկը ներկայացնել մինչև 2014 թ-ի մարտի 20-ը: Հետևապես, 20.02.2014 թ-ին հարկային մարմինն իրավունք չունեի արձանագրել «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ կողմից եկամտային հարկի վճարման պարտավորության խախտում: Այսինքն՝ 21.02.2014 թ-ի դրությամբ «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ի կողմից եկամտային հարկի վճարման պարտավորության խախտում առկա չի եղել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մանթաշյան 28/4 հասցեում գտնվող հանրային սննդի կետն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2014 թ-ի փետրվարի 18-ից և աշխատողների

հետ պայմանագրերը կնքվել են փետրվարի 11-ին, և որ Կոմիտաս 50/50 հասցեում գտնվող հանրային սննդի կետի աշխատողներից ոմանք ևս նոր աշխատողներ են եղել, որոնց հետ ևս աշխատանքային պայմանագրեր կնքվել են փետրվարի 11-ին, թվով 13 աշխատանքային պայմանագրեր գտնվել են «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ տնօրենի աշխատասենյակում: Այդ պայմանագրերի մեկական օրինակները երկկապամիտրեց ստորագրված և կնքված տրվել են աշխատողներին, իսկ երկրորդ օրինակները գտնվել են տնօրենի սեղանին: Տեխնիկական պատճառներով դրանք ստորագրված չեն եղել, ինչը տվյալ դեպքում ամենևին էական չէ, քանզի դրանց մեկական օրինակները երկկողմանիորեն կնքված և ստորագրված, տրվել են վարձու աշխատողներին: Մինչդեռ, ստուգումն իրականացնող հարկային մարմնի կողմից սույն փաստն ապօրինաբար մեկնաբանվել է որպես այդ պայմանագրերի իրավական ուժ չունենալու հիմք: Դրա հետևանքով «Ախորժակ Քլաբ» ԱՊԸ աշխատողները համարվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված աշխատողներ:

«Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ում ստուգում իրականացրած հարկային ծառայողները կոպտորեն խախտել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության պահանջը, ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված բոլոր պահանջները, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերի պահանջները:

Ուստի, մատնանշած հանգամանքների հիմքով ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել թիվ 2129252 ստուգման ակտի 1-ին կետը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիր ՀՏ պետի 20.02.2014 թ-ի թիվ 2129252 հանձնարարագրի համաձայն «Ախորժակ Քլաբ» ՍՊԸ-ում-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում, կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 12.03.2014 թ-ի թիվ 2129252 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 24.150.000 դրամ:

Ընկերության գանգատը վերաբերվում է ստուգման ակտի 1-ին կետին, որով մասնավորապես աճանագրվել է.

ընկերությունում թվով 40 վարձու աշխատողներ ձևակերպված չէին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, այսինքն բացակայում էր համապատասխան գրավոր աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանը և անհատական իրավական ակտը: Չեն կատարվել «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ հոդվածի պահանջները՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրության սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով, ինչպես նաև 83 հոդվածով և 84 հոդվածի 1-ին մասի պահանջները: Նշված խախտումը համապատասխանում է «Աշխատանքային օրենսգրքի» 102-րդ հոդվածի 1-ին կետին՝ անօրինական է համարվում այն աշխատանքը, որը կատարվում է առանց աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտի կամ առանց գրավոր կնքված աշխատանքային պայմանագրի: Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի, աշխատողին աշխատանքի սահմանված կարգով չձևակերպելու փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ ամսում հաշվարկում և վճարում է յուրաքանչյուր աշխատողի համար 600.000 դրամ եկամտային հարկ: Արձանագրվեց 40 չձևակերպված վարձու աշխատողներ, որի համար փետրվար ամսում հաշվարկվեց 24.000.000 դրամ եկամտային հարկ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման

մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը (այսուհետ՝ Կարգ) հաստատվել է ՀՀ Կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշման Հավելված 1-ով: Ընդ որում, ՀՀ Կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշումն ընդունվել է հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

Կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն. «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ քայլերը՝ ...

2) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր»:

Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն. «Սույն կետի 2-րդ ենթակետում նշված ցանկում ներառված անձանց բացատրում են հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքների մասին և, նրանց համաձայնությամբ, վերցնում են հայտարարություն (բացառությամբ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված այն դեպքերի, երբ ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած անձն այլևս տվյալ գործատուի մոտ չի աշխատում), որտեղ նշվում են՝

ա. հայտարարություն տվող անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բ. հայտարարություն տվող անձի կողմից իրականացվող աշխատանքային գործառույթների հակիրճ նկարագրությունը, գ. տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը.»:

Կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «սույն կետի 4-րդ ենթակետով ներկայացված հայտարարությունն ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստի վերաբերյալ կազմվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 1259-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) անբաժանելի մասն է»:

Կարգի 5-րդ կետի համաձայն. «Արձանագրության մեջ պարտադիր նշվում են սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցանկում ընդգրկված անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրա (նրանց) կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքերում արձանագրության մեջ նշվում են նաև այն հանգամանքները, որոնցով հիմնավորվում է գործատուի կողմից ստուգվող ժամանակաշրջանում նախկինում աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստը»:

Վերոգրյալից հետևում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստի վերաբերյալ ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից պետք է վերցվեր Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հայտարարությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 1259-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգով կազմվեր արձանագրություն:

Քննարկվող դեպքում, ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից 21.02.2014 թ-ին կազմվել է արձանագրություն, որում նկարագրված է Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում արձանագրված խախտումը, ինչպես նաև ընկերության ք.Երևան, Կոմիտաս 50/50 և Մանթաշյան 28/4 հասցեներում փաստացի վարձու

աշխատանք իրականացնող անձանց անունները և ազգանունները, իսկ որոշ դեպքերով՝ միայն անունները:

Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ քննարկվող դեպքում խախտվել են ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 1259-Ն որոշման պահանջները: Մասնավորապես, ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից չի վերցվել Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հայտարարությունը, իսկ 21.02.2014 թ-ին կազմված արձանագրությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 1259-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված արձանագրության ձևին՝ նշված չեն արձանագրված անձանց աշխատանքային պարտականությունների բնույթը (պաշտոնը, մասնագիտությունը) և անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ընթացքում ստուգող անձանց ձեռքբերած ապացույցները չեն կարող բավարար համարվել ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտումները հիմնավոր համարելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:


Նույն օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Վարչական ակտը մի մասով անվավեր կարող է ճանաչվել, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի: Եթե վարչական ակտն անվավեր է ճանաչվել մի մասով, ապա սույն հոդվածի կանոնները կիրառվում են միայն դրա անվավեր ճանաչված մասի նկատմամբ»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ձեռյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 12.03.2014 թ-ի թիվ 2129252 ստուգման ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Կ.ԱՐԻՐԱՄՅԱՆ